

Հայերէն ձեռագրաց հրատարակութեան գործը չորս տարի է սկսուած Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան կողմանէ, եւ լոյս տեսած երկու տետրերն բովանդակ գիտնական աշխարհէ լաւ ընդունելութիւն գտան: Մինչդեռ նոյն Միաբանութեան ձեռքք եւ տաւաշնորդութեամբ Բեղերապուրիքի եւ հոռմայ հայ ձեռագրաց ցուցակներն ըստ մասին տպագրուեցան եւ ըստ մասին կազմուելու վրայ են, տպագրութեան պատրաստուեցաւ նաեւ Պերլինի արքունի մատենադարանի հայ ձեռագրաց ցուցակն, ինչպէս նաեւ Բարիգի Ազգային մատենադարանինը: Այս միջոցին Կ. Պոլիս եւ Թիֆլիս լոյս տեսան նոյն յորինուածով ցուցակի երեք տետր: Բնականապէս ուսումնական աշխարհի աչքն ասով շէր կրնար յագիւլ, այլ էջմիածին, Վենետիկ, Երուսաղէմ, Վիեննա եւ Կ. Պոլիս սեւեռեալ է միշտ, ուր ամիսփութեան են հայ մատենագրութեան ամբաւ գանձերն: Մեր գլխաւոր աշխատակիցներէն մին Գեոր. Մեարոպ Վ. Տէր-Սովակեան, որ Բարիգի Ազգային մատենադարանի հայ ձեռագրաց ցուցակը կազմեց, եւ տպագրութեան կը պատրաստէ, կը կազմէ այժմ էջմիածնի հայ ձեռագրաց ցուցակը, եւ կը յուսանք քիչ ատենէն էջմիածնի Եարգ. Միաբանութեան պատուաբեր եւ պատկառելի հատորները տեսնել:

Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան մատենադարանին հայ ձեռագիրներու ցուցակն արդէն երեք տարի է սկսուած էր կազմուիլ: Իբր հինգհարիւր ձեռագիրներն մինչեւ այժմ՝ լոյս տեսած ցուցակներէն աւելի ընդարձակ ոճով կազմուիլ ժամանակ եւ տոկոսներովն կը պահանջէր արդէն այլովք բեռնատրեալ կազմողէն (Վ. Հ. Յակովբոս Վ. Տաշեան): Անարտումն ու տպագրութիւնն երկարածագեցաւ մինչեւ այս տարի, երբարդի հայ գրագիտութեան նշանաւոր ներկայացուցիչներէն մին, մեր ազգին «մեծ բանասէրն», եւ «ամենամեծ քերականն», Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան Աբգարայր Գեոր. Արսէն Արքեպիսկոպոս Այտրնեան իւր Բանաստեղծութեան եւ ուսումնական կենաց Յիսնամայ յոբելեանն լոնլեայն եւ վանական պարգուութեամբ կ'ուզէր տեսնել: «Հանդէս Ամսօրեայ», լրագիրն, որուն ազգին ուսումնագիրներէն մին ըլլալու պատիւը տուած է հայ գրագիտութիւնն, իւր պարտքը կը համարի հայերէնագիտութեան մեծ աղբիւրն վերոյիշեալ ցուցակն այս տարի նոր տոմ. Նոյեմբեր 1ին, որ օրն է Յոբելեանն, ի լոյս հանել եւ նուիրել Գեոր. Յոբելեանորին բովանդակ հայ բանասիրաց եւ հայ գրագիտութեան համակողջ հասարակութեան կողմանէ: Յուցակս արդէն մամուլ տակ է եւ Նոյ. ին լոյս կը տեսնէ մանօթ (մեծ քառածաւ) դիրքով, իբր 1000 երես, լուսատիպ եւ գունաւոր տախտակներով, սկիզբն գերմաներէն յաւելուածով:

Հայ գրագիտութեան այս նուիրին մասնակցիլ ուզողներուն՝ բաժնեթղթով կը տրուի ի փոխարէն քր. 15.— ի, կամ ֆր. 41.— ի (= ֆլ. 20.— = մարք 33.—): Նուիրման ճակատին վրայ կը դրուին նուիրատու բանասիրաց անուանքն, իսկ իւրաքանչիւրին օրինակները Նոյ. ին կ'ուղարկուի ուղղակի:

«Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնն», եւ «Մշակի», Յարգելի խմբագրութիւնն յայտնեցին իրենց համակրութիւնը Խմբագրութեանս ձեռնարկութեան: Բաժնեթղթեր ստանալ ցանկացողները կարող են ի Թիֆլիս յիշեալ Ընկերութեան եւ «Մշակի», Յարգելի խմբագրութեան գրասենեակը նոյն Ընկերութեան Քարտուղար Պր. Համբարձում Ա. Առաքելեանին դիմել, ինչպէս նաեւ մեր Յարգելի գործակալ Պր. Յովակիմ Զախալպաշեանին Պր. Կ. Մովսէս-Փեանի գրասենեակը: Ի Կ. Պոլիս կարելի է մասնակցիլ մեր Յարգող գործակալ Վ. Հ. Նոյնէ Վ. Կաֆէմանեանի դիմելով: Ուրիշ ամէն տեղերէն կարելի է կամ մեր Յարգելի Գործակալաց ձեռքք եւ կամ ուղղակի մեզ դիմել, (Rédaction de la Revue „Hantess“ VIENNE (Autriche) VII^e 2 Mechitharisteng. 4.) եւ մագնէ կ'ուղարկուին բաժնեթղթերն:

Նոր տոմ. Սեպտ. ամսոյ 15ին մասնակցողաց ցուցակը կը փակուի եւ կը տրուի տպագրութեան:

Վիեննա, 24/12 Փետր. 1895:

Խաթ. «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅԻ».